

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 Ֆր.

Վեցամսեայ . . . 6 «

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւ միկ ծրարով

Տարեկան . . . 12 Ֆր.


Վեցամսեայ . . . 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60
Վեցամսեայ 1. 50 Տօլար «

ԿԱՆԻՏԻԿ

Մանուշեան Գրող
20 սանթիմ



Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԻ

Réduction du journal

„Ir. vounk“

VARNA (Bulgarie)


Редакция

НАЪВСТНИКЪ

Иравунк

ВАРНА

Գրողները եւ լին
տրողը



ՎԱՂԱՄԵՌԻԿ

ԳԻՒՄՈՐԻԿ Թ. ԳՈՒՐՊԵՅԵԱՆԻ

Իր կողմէն կէս բացող
Շուշանի պէս գալիս հար
ձերմակներով փաթաթուած
ձերմակ բարձրիկի վերայ
Հանդիս անշարժ անմուռն
Մօրդ արցունքով ուղղուած
Վարդերու մէջ ցիրուցան
Անբիծ սնարիդ բարձրիկ
Տօգոյն մոմեր պլպլան
Բայց անոնցմէ էն տօգոյն
Ես գու, մոմիկ վաղաշէլ
Շուրջը դէմքիդ ուր ցաւիդ
Ակօս մ'անգամ չեն գծած
Ուր մոլոր կը դառնայ
Կապոյտ յորձանքը խուկին
Մինչ բարեպաշտ համոյն
Ձեռքիդ ճակտիդ կը տեղան

Գրեա՛, աղօր աղանեակ,
Թեւեթ ամփոփ քընացիր
Թարմուկ կալուզ հողին տակ
Թոյլ կոյս ձիւնը քնքօքէն
Մածկէ բլրակը շիրմիդ
Եւ թող երազ մը թառի
Երազ մ'անոյն անվախճան
Ուղեղիդ մէջ գեռատի
Երկինք մ'ամբողջ պնդուած
Վերջապիտ ամպերով
Եւ երկիր մը ծաղկավառ
Շաւիղներով ոսկեղէն
Իսկ դու պառկած հեշտօր
Հրեշտակներու գրկին մէջ
Մանկիկ խնդով մարմնուր
Ժուռ գաս եւ միշտ ըմբոխն
Համբոյրի կեանք մ'անթառամ
Այս՝ երազիկդ անվախճան

ԻՄՍՍՏՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ ՄԸ

Էջմիածնի Սինոդը շատ իմաստուն որոշում մը տուած է ամուսնութեան համար, պարտաւորեցնելով ամուսնացողները բժշկական վկայական ներկայացրնելու ամբողջական և ալ վտանգաւոր հիւանդութիւններէ զերծ ըլլալին հաստատող, Ահա Սինոդին հրամանագիրը.

«Հրաման նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին Ամենայն Ռուսաց Ի Լուսաւորչական Հայոց Սինոդի Սրբայ Էջմիածնի.

«Ըստ հրամանի նորին Կայսերական Մեծութեան Ի Սինոդիս լուան զյայտարարութիւն թեմակալ առաջնորդին հայոց Աստուր խանի Ի 4 հոկտեմբերի տարուայ թ. 154, որ ունի զայս օրինակ լրականութիւն է արդէն վերջապէս Ի բաղմաց բաղում անգամ, զի վնասեալ անուանեալ հիւանդութիւնք ամենուրեք ծաւալ մեծ ընկալեալ Ի ժողովրդական մեր թէ Ի քաղաքացի եւ թէ Ի գիւղական անգամ թիւնաւորեն և քայքայեն զֆիզիքական և բարոյական կազմ կենաց եւ բարգաւաճման ներկայ եւ ապագայ սերնդեան: Հետեւանք այդպիսոյ ծանրադէտ շարեաց է և այն՝ զի օր ըստ օրէ բաղմանն խնդիրք պսակալութեան Ի հոգեւոր ատեան մեր այնպիսիք, որք շարժառիթ ծագման իւրեանց ունին զախտաւորութիւն առն և զվարակումն կնոյ, Որք Ի սրտէ և ըստ պարտուց կոչեցեալք են Ի ծառայել հասարակութեան, բժիշկ և հրապարակասօք, Ի վերջին ժամանակս իւրի զմի Ի փրկարար միջոցաց համարեն պահանջել յարանց, մտանողաց յամուսնութիւն, զբժշկական վկայական վասն առողջութեան: Զիրագործումն այսպիսոյ օգտակար առաջարկութեան գտանելով ժամանակակից պէտք անհրաժեշտ պատիւ ունիմ խոնարհաբար խընդրելոյ զհաւանութիւն Սինոդի գործիքս Էջմիածնի վասն սահ-

մանելոյ Ի վիճակս զպահանջումն բժշկական վկայականի վասն առողջութեան արանց, խնդրողաց զիրաւունս ամուսնութեան: Հրամայեցին՝ Առեալ Ի նկատ, զի յաճախ դէպք լինին, յորժամ մտանողքն յամուսնութիւն վարակեալ գորով վնասեալ անխտիւք, վարակեն յետ ամուսնութեան և զկենակիցս իւրեանց՝ լինելով պատճառ քայքայման առողջութեան նոցա և զտուեաց ծնելոց յայդպիսեաց ամուսնութեանց և իւրեւ անմիջական հետեւանք այդորիկ յերեւան գան անբաղդութիւն և կործանումն ընտանեաց, յաճախ լինելով առիթ և պատճառ ամուսնալուծութեան, ուստի Սինոդս պատուիրէ թեմակալաց վիճակաց առնել այսուհետեւ տնօրէնութիւն ըստ թեմից իւրեանց պահանջել յարանց բնակելոյ Ի քաղաքս և Ի մտանելն նոցա յամուսնութիւն զվկայական բժշկի վասն առողջութեան նոցա եւ ապա տալ հրաման ամուսնութեան նոցա, իսկ յանձանց, բնակելոյ Ի գիւղօրայս պահանջել զնոյնպիսի վկայական բժշկի, եթէ գոն հնարաւորութիւնք առ այն: 1904 թ. Ի ս. Էջմիածին:

Անդամ Սինոդի՝ Մատթէոս վարդապետ: Կ. Պ. ատենադպր: Մ. վարդապետ: Կ. Պ. գործավարի Գ. Թումանեան:

Լ Ե Ն Ա Ս Տ Ա Ն

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ԴԱՍԱԿԻՔՆԵՐԸ

Տիկին Շէլիկա բարեհաճութիւնն ունեցաւ մեզ հաղորդելու «Լեհոհի» ստորագրութիւն կողմ նամակ մը, որմէ արժան գատեցինք հետեւեալ հատուածները արտագրել:

... Մեր ժողովուրդը հիմա վերջին ծայր խեղճութեան մատնուած է, կանգնած է թեւեւ որ հազարաւոր գործաւորներ առանց գործի մնացած են, այնպէս որ Ի վիճակի չեն իրենց

զաւակաց ապրուստը հոգալու: Խեղճերը յուսահատ կը թափառին Լոծի եւ վարչաւայի փողոցներուն մէջ, եւ լրագիրք ամէն օր փողոցին մէջ անթաթութենէ պատճառուած յանկարծանքէ պահանջ կը յիշատակեն: Բարեգործական գրասենականերու անօրէնները մտատանջութեան մատնուած են, զի թշուառութիւնը երթալով կառնայ:

Ամէնը այս չէ: Ամբողջ երկրին մէջ զինուորահաւաքութեան սկսեալ են. 40000 նոր զոհեր կը խլուին Բալոնիէն, ճարձման թնդանօթներու բերին ճարակ նստուելու համար: Այլ կրնաք երեւակայել իրենց արօրներէն, կոմ գործաւորներէն, իրենց բռնակարաններէն, իրենց զաւակներէն եւ իրենց կիներէն յափշտակուած այս զօրազիններուն սոսկալի յուսահատութիւնը:

«Եթէ պէտք է ջարդուինք, թող հոս ջարդուինք, մեր հայրենի հողին վրայ, մեր հարստանքի տնակներուն ձեռքովը» Ահա այսպէս կազաղակեն մեր ամէն պահստի զինուորները:

«Բարեկան անգամ պիտի լային» կըսէ վարչաւայի ժողովուրդը:
«Ռուսաստանը չենք ուղիւ պաշտպանել, ան մեր հայրենիքն է: Մեր հայրենիքը հոս է» կը պոռան սպաներու երեսին: Կանգնած են անշուշտ թէ պահեստազօրի կիները երկաթուղւոյ գծի երկաթներուն վրայ նստուեցան եւ իրենց հայրերը Մ. Արեւելք տանող կառքերուն անիւները անոնց մարմիններուն վրայէն անցան: Կանգնած են անաւ, թէ յանկարծական մահի եւ խելագարութեան գէպքեր սովորական դարձած են, եւ նաեւ թէ երեք նահանգներու մէջ ուտիկանութիւնը հրացան ալ ձակեղ ժողովուրդին վրայ:

Նոյնպէս չիմացաք, թէ երբ Կոսթէնի մէջ հրաման տուին ոստիկանութեան ջարդել ըմբոստ պահեստի զինուորները, Բոլոնիացի գնդապետ մը, Միլիտարի շրջանաւոր հարուածով մը ինքզինքը սպաննեց ժողովին առջեւ: Ձէք գիտե՞ր նաեւ թէ Բիւթնոյի մէջ յուսահատութենէ խելայեղ կիներ դատարկ ձեռքերով յարձակեցան ոռուս սպաններուն վրայ, յետոյ երկաթուղւոյ երկաթներուն վրայ ծնրաղբերէն, եւ, թեւեթ իրենք վերցնելով, աստուածային զթութիւնն հայեցին:

Բիւլիւսքի, Շէպթօֆայի, եւ Լոծի մէջ ոստիկանները կրակ ըրին ժողովուրդին վրայ:

... Ռուս կառավարութիւնը կը ստէ երբ կըսէ թէ կարգուած մարդիկ եւ ընտանեաց հայերը գրօթի տակ չը կանչեն: Այս ամէնը կը գրեն ձեռքի համար, Եւրոպային համար:

կասեան մինչև իսկ եօթն զաւակաց տէր ընտանեաց հայրերը : Կանեն նաեւ այրի մարդիկ որոնք պղտրիկ գաւակներ ունին հոգալու :

Անոնցմէ մէկը սեանկալ որ իր աղբոսանքին մօտիկ ընող չկայ, իր երեք զաւակները կտնայ եւ ապա եկաւ անձնատուր եղաւ : « Զուհէի մէկը ուրուն զանոնք ձգէի » ըսաւ նա : Ուրիշ մը զոր եկան տանիւն նոյն իսկ մահուան օրը կնոջը, որ կը ձգէր երկու տարւան աղկնակ մը ու քանի մը օրունան նորածին մը, կաղնի մը առաւ : Կպանեց զանոնք եւ զրաւ իրենց մօրը զագաղին մէջ : Ուրիշ մըն ալ սպանեց իր կինը, իր աղաքը եւ ապա ինքզինքը :

Կարչաւայրի գիշերուան պահապանը, զոր եկան տանիւ փողոցէն, շատ աղաչեց որ ձգեն զինքը անգամ մըն ալ տեսնել իր կինը եւ աղաքը, որ այդ միջոցին կը քննային : Կաղնի թէ հայտնաց մը նետեց անոնց վրայ, ինկաւ մեռաւ :

(Լ'Էօրօքէն)

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԴԵՊՔ ՄԸ

Վառնայի դատարանական քննիչն այսօր զիս հրաւիրեց էր քննութեան ու ինձմէ մատրասան տեղեկութիւններ պահանջեց իմ հայերէն հրատարակած « Մուհամմէդ » զբոլոյիս համար : Պատճառը Տաճիկ պետութեան Պոլիարիոյ մայրաքաղաքը եղող քոմիսսիոն էր : Այդ տաճիկ պաշտօնական իմ հեղինակած այն գրքոյկս կարգաւոր զանգատներ էր Պոլիարիոյ կատարարութեանը, թէ « Եւրոպական քոմիսսիոն քննարկելով զպետութեանը յառաջ բերեց է ի Ռուսաստան եւ ատոր պատճառաւ ռուս կառավարութիւնը զանիկայ իրեն զբօշակեան արտաքսեր է իր երկրէն, ու հիմա ալ հոս հայերուն ու տաճիկներուն մէջ խռովութիւններ յարուցանելու նպատակաւ գրեց է այդ գրքը » ու խնդրեց իր օր զիս դատաստանի ենթարկելն, նաեւ պնդեց էր թէ իմ Դուրանէն բերած վկայութիւններս ծուռ թարգմանուած են :

Փա՛ռք Աստուծոյ, մենք հոս ազատ երկրի մէջ ենք, ուր ամեն մարդ ազատ է իր գաղափարը հրապարակելու : Յիշեալ քարձրաստիճան տաճիկ պաշտօնեան փոխանակ մի երկու անհիմն խօսքերով զիս դատաստանի յանձնելու, աւելի ազէկ կընէր, որ « Դուրան » ու արդարազատ քրիստոնեայ եւ Մահմետական անկողնակալ անձինքներէ մի ժողովք կազմէր ուր ես ու ինքը կամ իրեն կողմանէ մի խօսք քննէինք իմ գրածներս Մահմէդէ գրեցին : Եւ եթէ անոնք կա պաշտօնեանէն օրինաւոր փաստերով իմ սխալներս, ես պատրաստ կըլայ յի զանոնք մէկիկ մէկիկ հրապարակաւ յետս կոչելու : « Մուհամմէդ » զբօլոյկըս գրելու ատեն ունեցեր եմ առջեւս միծաւ մասամբ մահմետական նշանաւոր աղբիւրներ, նախ եւ առաջ Դուրանը, յետոյ Ալ-Պուխարէն աւանդութիւնքը (էհատիս) յետոյ Օսմանիէն Բովզէթ-ու-Ալ-Կապը, յետոյ Բովզէթ-ու-Ալ-Կապը Պարսկերէն, յետոյ գերմաներէն Շփերնկէրը եւ երկու ուրիշ անգլերէն պատմութիւններ Մահմէդի մասին :

Մէկ կրօնք որ ստիպուած է սուրբ օմանդակութեամբ պաշտպանելու եւ միշտ արտաքին միջոցներու կը գիմէ զինքը իրեն ճշմարիտ ցուցնելու, ամեն ատեն կարելի է եւ պէտք է անոր ճշմարտութեանը վերայ կասկածել, Բագմատականութեան աղիւսակի ստուգութիւնը աշխարհքիս մէջ ոչ մի ազգ եւ ոչ մի անձ երբէք փորձած չէ բռնի միջոցներով պաշտպանելու : Մեր Տէրը Յիսուս Գրիգորոս ալ, երբոր 6000 Հրէաները կուղէին զանիկայ իսլամաւոր չինելու եւ անիկայ անոնց վրէժաւոր բմբուկի խօսքեր ըսաւ եւ անոնք զինքը ձգեցին ու հրաժարեցան, իր աշակերտներուն ուղղեց այդ ազատութեան հարցումը « Դուք ալ կուղէք երկալ » : (Թո՛ւ. Գ. Գլուխ 1) : Սուրբ իսլամական կրօնքը քրիստոնէութեան հակառակն է, Բոլոր Տաճկաստան եւ նոյն իսկ Պոլսոյ մէջ կան շատ մահմետականներ, որոնք կը կարգան մեր Սբ. Գրքերը, կը հաւնին եւ կը հաւատան, բայց սպաննուելէ վախճալով իրենց համոզումը կը ծածկեն : Ես մէկ երեւելի փաշա սեւսայ Պօլսոյ, որ մահմետականութեան զէմ դրուած « Իրաւունք » գիրքը պարսկերէնէ Տաճկերէնէ Երթարձմաներ որ սպանեցաւ ի Լոնտոն : Հիմա Երթարձման եւ Ամերիկայի քրիստոնէից մէջ մեծ արժեւորութիւն է սկսած մահմետականներուն ալ Աւետարան քարոզելու : Այդ քարոզչական ընկերութիւնքը պիտի զբոնեն Պարսկերէն, Արապերէն, Տաճկերէն, Թարսերէն, Աֆղաներէն եւ ուրիշ մահմետական ցեղերու լեզուներով քրիստոնէութեան լոյս ճշմարտութիւնները եւ իսլամի, Դուրանի եւ Մուհամմէդի սխալները, Դուրանը մի այնպիսի անկապ անկանոն եւ խառն գիրք է, որ աշխարհքիս մէջ անոր նմանը չկայ : Ինչու ճշմարտութեանը միւլիմ գիտնականք իրենք գտին եւ Դուրանի մէջ հինգ հարիւր հակասութիւններ : Դուրանի մէջ կան խիստ շատ կրկնումներ, անհասկանալի եւ թերի ակնարկութիւններ, անճիշտ ինքնատեար պատմութիւններ եւ ուրիշ շատ պակասութիւններ : Մի շատ զարմանալի իրողութիւն է այս, որ աշխարհիս ամենալուսաւոր ազգերը՝ մանաւանդ Անգլիացիք եւ Ամերիկացիք Հին եւ Նոր կտակարանը ոչ միայն իրենց լեզուներով թարգմանեցին եւ կը կարդան, այլ մօտ 400 օտար լեզուներու ալ թարգմանելով բովանդակ աշխարհիս վրայ մեծամեծ ծախսեր ընելով կը տարածեն : Եւ ինչ է պատճառը : Պատճառը այդ Սբ. Գրքը ճշմարտութիւն է, իսկ Դուրանը անա 1300 տարիէ որ կը գտնուի մահմետականներուն ձեռքը, եւ մինչեւ այսօր ոչ մի ազգ իսլամական ազգ չէ համարձակեր զայն ճշմարտապէս թարգմանելու : Ինչու Որովհետեւ անոր մէջ բաներ կան, որ եթէ մէկը բառ առ բառ կարդայ եւ անոր բուն միտքը կը հասկընայ, հազիւ թէ այլեւս կը հաւատայ անոր : Դուրանի մեկնիչներն ուրիշ միտք կը դնեն մէջը : « Մուհամմէդ » զբօլոյկս գրելու ատեն նպատակս ըսաւ հայերուն ու տաճիկներուն մէջ խռովութիւն ձգել չլի, ա՛յո՛ր մէջ աղաքի մի առիթ ալ չկայ : Այլ սխալ էր, որ մեր հայերը ազէկ ճանչնան Մուհմէդ : Այդ մարդը պիտի իր մարգարէ չըլլալու եւ կը ձեւանար մարգարէ, զինքն ամենամեծ մարգարէի տեղ կը դնէր

բայց հրաշք կը պահանջէին ու չէր կրնար ընել, խօսքերով կը խաղար ու առասպելներ կըսէր, կնիկներու մօտիկ ըլլալով անկարգ բաներ ըրած է, ու շատ ասպատակութիւններ ու արիւնհեղութիւններ գործեր է՝ տեղ տեղ ստախոսութիւն ու խաբէութիւն օրինաւոր համարելով : Այդ գրքոյկը իմ քով է ու հոտը կարծէ մէկ լէ՛ւ : Դուրանի թարգմանութիւնն ալ ծանօթութիւններով հանդերձ պատրաստ է : Եթէ փափաքողներ գտնուին 150 երեսը մէկ լեզով կարելի էր ապկ, գոցէ 4-500 երեսէ բաղկանայ : Այդ մասին թող փափաքողք գրեն ինձի կամ « Իրաւունք » խմբագրութեան :

Վառնա Ա. ԱՄԻՐԱՆԻԱՆԵՆՑ

ԹՂԹԱԿ Յ Ո Ն Թ Ի Ն Ն Ե Ր

ՆԱՄԱԿ ՌՈՒՍՉՈՒԲԷՆ

Չըլլալիք Բարիքը

Տեղւոյ Աղքատախնամ Ընկերութիւնը, այս տարի ալ, իր բարի սովորութեան համեմատ, զարոցական աղքատիկ աշակերտներու եւ աշակերտութեան հազուադէպ կտաններ պիտի տայ որպէսզի ձմեռնային եղանակին մէջ աղաքը մերկ պտտելէ, զերծ մնան—դէ՛թ այս է ընկերութեան համոզումը : Եկող տես որ, այս տարի, խեղճ աղքատներ երեւի, ձմեռը կանուխ սկսաւ—առանց սակայն կաղանդն ալ իր հետ կանուխ բերելու :

Պատճ. Խնամակալութիւնը այնքան ճշգրտաբար ու օրինական է իր գործունեութեան մէջ որ չուզեր իր ատած եւ է քայլը անհայտի հասցնել իր նպատակին. ամէն վայրկեան համարաւոր է իր գործունեութեան—հոգ չէ թէ « Ինք գաղտնի կերպով կողմէ աղքատներուն » կամ աւելի ճիշդը՝ ինչ որ կուտայ իր աջը չիմանար ձախը, ըսածս աւելի լաւ բացատրելու համար կուգամ յայտնելու թէ խնամակալութիւնը, դարձեալ իր սովորութեան համեմատ, կտանները բաժնած պահուն չը պիտի մօտայ պատուիրելու աշակերտներուն որ իրենց հաղուստը մինչեւ կաղանդ չի հագնին որպէսզի . . . կաղանդին երբ անոնք եկեղեցի երթան խուսով՝ Աղքատախնամ գործունեութիւնը փայլի ի տես ամենեցուն :—Մտեցէ՛ք, աղաք կաղանդին կը տաքնաք :

Այս դեռ ոչինչ . . . Խնամակալութեան անդամներէն խիստ անհայտ մէկը կը ներկայանայ վարժարան աշակերտներուն ներթափանց կարողութիւնը քննելու համար : Հոս է որ կը պարզուի անրիճ հոգիներու զգացած արժանապատուութեան վերաբերանքի սրտածմբիկ տեսարանը :

—Կիրակոս Թորոսեան, կը կանչէ քննիչը կանխաւ սրբաւոր ցուցակի մը վրայէն կարգաւոր տղոց անունները :

Երեսուն աշակերտներու մէջէն տաքի կնիւն խեղճ կերակուր նոյն վայրկեանին զգացած յուզումն մերթ դողալով, մերթ գունաթափուելով եւ հասանականաբար անթիկնով ա՛յն հայրը, որ թէեւ իրեն կեանք տուած էր բայց հայրուս չէր : Դժուարութիւնը կը կատարուի ամենուն ներկայութեանը արդիւնք :

—Կիրակոսին հայրը իր կեանքին լաւ ու վատ կողմերով երեւան կուգայ բոլոր աշակերտներուն առջեւ

ուելի ճիշդը, կիրակոսին հօր կենսագրութիւնն է որ կը պատմուի :

—Մարգար Թովմասեան կը շարունակէ կարգաւ քննիչը. Մարգար նրսւած տեղէն ելլելով կը մօտենայ քննիչին. զոյգ մը քննող աչքեր վայրկեանապէս կը կատարին իրենց պաշտօնը : Կարգը կուգայ հարցաքննութեան այս անգամ հարցաքննութեան արդիւնքը պահ մը մտածել կուտայ մեր քննիչը : Փանաքի աղանդաւորի զգացումներն իր մէջ կընդգլխին, միտքը կը պաղարուի կարգ մը անօրինակ խորհուրդներով. հայրը բողոքական է, կը մտածէր ան, մայրը՝ լուսաւարութեան (կեբը մեր տունն ուսել, հաւկիթը զրացիւն տանիլ) : Իրաւունք է, իսկոյն մաքր թարգման կը հանդիսանայ բերանը եւ յանկարծ նոր միտք մը կը յղանայ մեր աղանդաւորը ու կը դառնայ ամենուն :

« Զեր մէջէն ով որ բողոքականներու ժողովարանը երկալու ըլլայ իրեն տրուած հազուադէպ ետ պիտի առնուի » :

Պր. Դմիտրի կարծիքով բողոքականները իրաւունք ունին (այսինքն պարտաւոր են) Աղքատախնամ լուսաւորչական անդամներուն ներթափանց աշակերտութեան անուանով, իսկ լուսաւորչականները պարտաւոր չեն (իրաւունք չունին) բողոքականներու ու է կերպով օգնելու :

Անուններու ընթերցումը կը շարունակուի մինչեւ վերջ :

Տղաքը կը լռեն իրենց մտքին մէջ պահելով յիշատակ մը այս անցուղարձէն, որուն վերաւորիչ կողմերը իր չափահասութեան մէջ միայն պիտի վերլուծէ :

Իսկ Պր. Դմիտրի, իր տոբած յաղթութեան վրայ վստահ եւ ուրախ դուրս կըլլէ վարժարանէն անձնական գանձէն բարիք ընող չօրպանի մը հպարտ քայլերով :

9 դեկտ. 1904 ԽԱՐՕ Ռուստուկ

ՆԱՄԱԿ ՇՈՒՄԼԱԷՆ

10 դեկտ. 1904

Պարագայից բարեպաշտի բերմամբ ընթացիկ ամսոյ 4 ին Շուտլա գրտնուեցայ, Հայկական Դնթրեցարանի սրահին մէջ հանդիպեցաւ աղբի մը՝ որ ուշադիր աչքերէս չի վրկպեցաւ, պարունակութիւնը կարգաւոր չուտով վերահասու եղայ թէ նոյն օր Սբ. Աստուածածնայ եկեղեցւոյն մէջ տեղի պիտի ունենար Հոգեհանգստեան պաշտօն մը Լուսաւորի Մհի. Օր. Թէպէր Եղուպեանի հոգեւոր համար իսկ տեղւոյս արական վարժարանի սրահին մէջ Լուսաւորեան համար աղբային հանդէս մը, ընդ հովանաւորեամբ խնամակալութիւն Տիկնանց մասնախմբին ի պատիւ Եղուպեան Գերգաստանին :

Իրեւ աղբային անհատ օտոյն հանրային հրաւերին փափաքով մասնակցել, փութացի զիմեյ նախ Սբ. Եկեղեցի եւ յետոյ Վարժարանին սրահը :

Երկուքսմեք եւ հայկական դրօշներով, զինանշանով, տօսախէ պըսակներով զարդարուած բեմ մը սըրտէին ճակատը կը պնէին, որու առջեւ « Հայրենեաց նահատակաց Ա. ճիւղները » կրող վերատառութեամբ կոմիտ մը օտոյն ակնապարար տեսարանին վրայ նոր փայլ մը կաւելցնէր :

Հանգեցրեց սկսած երկուսն առնուց կողմէն երկուսն հայկական մար- ղով մը, ուսկից ետքը վարժարանին ծնունդը բերեց ելլելով ու Տէրու- նական մի վճիռ «այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս ուր ո'չ ցնց եւ ո'չ ուտիճ ապականեն եւ ո'չ գողք ալան հատանեն եւ գողանան» իբր ընա- րան առնելով, ազգու շնորհով, համոզել փաստելով ու համառօտ տեսութեամբ պարզեց հանգուցեալ Մհերի. Օր. Թէպէր Եղեղեպիանի յիշատակաց արժանի բարերարութիւն- նը, որ ի կենդանութեան հաճեցաւ ընդարձակ գետին մը, շէնք մը ու համեստ եկաւուտ մը կտակել տեղւոյս իգական սեռի կրթութեանը համար: Մարդկեց նորա հոգոյն հան- հանգիստ եւ արժանաւոր յաջորդներ եւ բուն ծախարարութեամբ խօսքը վերջացուց:

Աշակերտք եւ աշակերտութիւն փոխ ի փոխ զեղեցիկ կտորներ արտասանե- լով եւ ազգային երգերով ընհատելով հանդիսականաց հաճոյք կտրթէին: Լուսաբերեան վարժարանիս սանու- հներէն Օր. Լիւսի Բէօսէան, իբր պարագլուխ՝ ընկ ռուհեացը կողմէն ներկայանալով ատենախօսութիւն մը բրաւ, հանգուցեալ բարերարութեան յիշատակը դուռնադրելով եւ համայն ի- գական սեռին երախտագիտութիւնը յայտնելով:

Տեղւոյս պատ. Հոգաբարձութեան անդամները ի մօտոյ ծանօթ ըլլալով ինձ եւ միանգամայն ինչ ինչ տեսա- կէտով առնչութիւն ունենալովս, համարձակեցայ նախ իմ անկեղծ շը- նորհակալքս յայտնել խնամակալութեան Տիկնանց ունեցած գովիլի գլխա- մանցը համար, իսկ երկրորդ այլ եւ տեղեկութիւններ ոտանալ սոյն յանձ- նախումբի մասին:

Գոհութեամբ սրտի տեղեկացայ թէ տեղւոյս ազգայնոցմէ չորս տիկնաներ օրոքց անուանները յուշատեսարիս մէջ նշանակած եմ, յանձնարումը մը կազ- մած են շուրջ քսան արարներէ ի վեր հաւանութեամբ պատ. Թաղ. Խորհրդոյ եւ պատ. Հոգաբարձութեան մարմնոց ու յանձն առած են Լուսաբերեան վարժարանի եւ Մանկապարտէզի մը

վարչութիւնը, ուր առնուազն եօթնամ- սունի չափ երկուսն աշակերտք ու ա- շակերտութիւն կը յաճախեն:

Մի քանի տարիներէ ի վեր տիրա- պետած զբամակն տաղանային իբր արդիւնք, վերոյիշեալ Տիկնայք տե- ղական միջոցներով գրեւորով, հան- գէսներ սարքելով եւ մասամբ մը պատ. Թաղական Խորհրդոյ աջակցու- թեամբ, յաջողած են մինչ ցարդ վերոյիշեալ վարժարանները բոլոր կար- եաց բարեկարգ վիճակի մը մէջ շա- րունակել, լոյր ծախքերը ստանձնե- լով:

Իցիւ թն, յիշեալ խնամակալութեան Տիկնանց Գովիլի ետանդը. կրթութիւն ճիշտ ջանքը իրեն մը ըլլար ուրից եւ բազում հետեւողներ ունենար: Յաւարտ հանգիսին ներկայից խու- ռն բաղմոթիւնը գոհութեամբ սրտի հրաժեշտ տուաւ, խնամակալութեան տիկնանց իր շնորհակալութիւնները յայտնելով, եւ իւրաքանչիւր ոք ըստ կամս եւ ըստ կարեաց զբամա- կան նուէր մը եւս տալով, ուսկից գոյացած հասոթը յատկացուցաւ ի նպաստ Լուսաբերեան վարժարանի:

Կը խնդրեմ, արգոյ խմբագիր տէր, հաճեցէք ներկայս հիւրընկալել Ձեր ազգօրուտ թերթին մէջ ի քաջալե- րութիւն վերոյիշեալ եւ բարի օրի- նակ այլոց:

Համդիւստեա Ուն

Թ Ա Տ Ր Ո Ն

Նատէժտա հայ դերս. խումբս այս հինգը ղրդի Պ. Անիսէ Պուրժուարի երկերէն առաջին անգամ ըլլալով պի- տի ներկայացնէ «Մայրական Գործը» անուն սրտաշարժ եւ ընտանեկան թատերաստիւրը:

Բարեհաճեցէք տիար խմբագիր, ի լուր թատերաստիւրաց հրապարակել ներկայ ազգարարութիւնս ի քաջալե- րութիւն հայ դերս. խմբիս ի դիմաց հայ դերս. խմբիս Վ. Պապսեան

Հ Ա Շ Ո Ի Ե Ց Ո Յ Ց

ԱՂՔ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՌՆԱՅԻ

Սկսեալ 1903 Յուլիս 1 էն մինչ 1904 Նոյեմբեր 30

ՄՈՒՏԻ

Նոյն տարեթիւն	Ֆր.	Մնդ.
Հարսանեաց, Նշանա- խօսութեանց եւ յուղար- կաւորութեան արթիւ	40	10
Ս. Մանդեան եւ Ս.		
Զատիկի առթիւ	214	55
Զանազաններ	53	60
Ս. Եկեղեցւոյ եւ շրջա- փակին մէջ գրուած պր- նակներէ գոյացած	683	
Բաժնեգրիք		
Անգամներէ գանձուած	1148	75
Պարահանդէս		
Գոյացեալ հասոթ	1147	80
Կտակ		
Արսէն Էսափաշեանի մահուան արթիւ	100	50
Գումար	3387	30

ԵԼՔ

Նպատակի գործադրութիւն	Ֆր.	Մնդ.
Դրամական նպաստ կա- րօտ եւ հիւանդ աղքատաց	1118	30
Կաթ, միս, հաց	39	70
Բժշկի այցելագրին եւ դե- ղօրէից	203	95
Ս. Մանդեան եւ Ս. Զատ- կի առթիւ նպաստ աղքատաց	159	50
Արսէն Էսափաշեանի կտակի արթիւ նպաստ կարօտեց	63	
Կան կարասի		
Ընկ. գրասենեակի կահաւոր- ման	55	55
Զանազան ծախս		
Տնտրակ. Բաժնեգրի, նուր- քատման տպագրութեան եւ գրասենեակի ծախս	69	
Հաւաքիչի անսական եւ տա- սանորդ	115	80
Բաժնեգրիք		
Անգամներէ մնացած բաժնե- գրիք որք կանխիկ նշանակուած		

են տետրին մէջ	5	70
Պարահանդէսի ծախս		
Եղած ծախս եւ ապառիկ մնացած տոմս	213	95
Պահեստի դրամ		
3387 30 Ֆր. 100 ին 10 էն 338 70		
Պատրաստ դրամ		
Նպատակին գործածելի	1004	15
Գումար	3387	30
Անգամք Հաշուեքներէ յանձնաժողովի Գ. Սիմոնեան Ա. Մեղիսեան Կ. Ա. Գուրտեան		

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

Քանի մը օր տալք բերիս- պուրկեան լրագրի մը խմբագրատե- յը մտաւ 12 տարի կանի մօտ տղայ մը ըսելով թէ տպուելու մանրա- վէպ մը ունի:

Երբ հարցուցաւ թէ ով է հեղի- նակը, տղան պատասխանեց թէ ին- քն է մանրավէպին հեղինակը եւ հե- րոսը:

Հետաքրքիր խմբագիրն զայն կար- ղալով տեսաւ որ վէպին նիւթն ատնուած էր փոքրիկ հեղինակին ընտանեկան կեանքին:

Վերագրին էր «Առանց պատառ մը հացի» . ահա բոսիկ մը վէպիկէն:

«Երեկոյ էր. Հինգած սեղանի մը առջեւ նստած է չորրորդ ու դաշիս- հար մայրը, եւ խոշոր արցունքներ կը գլտորին իր փոսայեալ այտերէն. եռամեայ մանկիկը կաղաղակէ:

—Մայրիկ, հաց տուր ինձի, ան- թութեանց կը մարիմ:

—Ուրեք գանձի՜ քեզ այդ անթեմալ հացը. պատասխանեց մայրը, արաս- ուելով հանդերձ:

Կը մտնէ 12 տարուան օրգին,

—Մայրիկ հաց չկա՞յ մի ուտելու հարցուց նա իր մօրը. ե՞րբ հաց պի- տի բերես:

—Երբ ինքը սկսիս աշխատիլ — անոր ականջին փսփսաց ներքին ձայն մը:

—Աւելի լաւ պիտի ընես եթէ աշխա- տիս գործատան մը մէջ, աշխատանքի մը մէջ, կամ թէ ծառայ ըլլաւ քան

ՆԵՐՍԵՍ ԱՅՏԱՐԱԿԵՑԻ

(Արտատպուած ԲԱՋՄԱՎԷՊ հանդէսէ)

«Այ, օրհնած, պատասխանեց կաթողի- կոսը, այս ինչ սովորութիւն է ձեր մէջ, ձեզ հաւատացած գործում անհաւատարմութիւն գործ զնիլ. ես մտքուս դրել էի քեզ այս փողից յիսուն մանէթ տալ»:

Շատերը նոյնպէս մեղադրում են Ներսէսին, որ նա հոգ չտարաւ ունենալ էջմիածնում մի կանոնաւոր դպրոց. բայց պէտք է ասեմ, որ ինձ հանգուցեալ կաթողիկոսը պատուիրել էր որ որքան Աթոռի գանձարանը ոսկի հաւաքուի, պահիմ (որովհետեւ ես էի գանձապահ) ասելով թէ պատեարզմից յետոյ Ղարսից չամի գերան եւ տախտակ պիտի բերել տամ: Նա միտք ունէր էջմիածնում մի հոյակապ ուսումնարան կառուցանելու:

Աստորախանի առաջնորդ Սերովբէ եպիսկոպոսից ժողովրդականք բողոք էին ուղարկել կաթողի- կոսին, թէ եկեղեցիներէ գումարներէց սպորթի կերպով վերցրել է քսան հազար մանէթ եւ իւր անունով պրիլ է պետական բանկը չա- հեցնելու համար: Կաթողիկոսը Սարգիս Վ. Զա-

լալեանցին նշանակեց քննիչ Աստորախանի վի- ճակի: Քննիչի Աստորախան մտնելիս Սերովբէ աճեց տոկոսներով ու հասաւ վաթսուն հա- եպիսկոպոսը վախճանած է լինում: Սարգիս զար բուրբու: Քէրդ կաթողիկոսը ստացաւ այդ վարդապետի իւր քննութիւնը շարունակում է. գումարն եւ բերեց էջմիածին:

Ներսէս կաթողիկոսը ամենեւին յետ չէր մնում ժամերգութիւնից. առաւօտ եւ երեկոյ աշ- խատում էր ամենից առաջ գնալ եկեղեցի:

Մի առաւօտ իւր սովորութեամբ գնում է եկե- ղեցի եւ տեսնում է, որ բոլոր դասերը դա- տարկ են. ժամերգութիւնից յետոյ լուսարարին հրամայել է ցուցադրել եկեղեցի շէկողներին ա- նուններն. եւ հրամայում է, որ բոլորն էլ գնան լճի վերայ ամբողջ օրը կանգնին ու նա- յին աշխատող մշակներին. իրաւունք չունե- նալով ճաշի գնալու. թէեւ անտեսը նորանց համար ուղարկել էր ուտելիք: Կէս օրից յե- տոյ ինչն էլ գնաց լճի վերայ եւ սկսեց նա- խատել ժամ չեկողներին, այս խօսքերով. «Անշնորհներ, տեսէք — այս մշակներն եւ վարդապետներն արեան քրտինքով հաց են աշ- խատում. նորանք մեզ նման ամեն ինչ պատ- րաստ չունեն վայելու. այլ աշխատութեամբ հաց են ճարում — դուք էք նորանց դառն քըր- տինքով աշխատանք էք վայելում. անաշխատ եւ ծուլանում էք աստուծուն փառաբանել, մինչ- դեռ ձեր ալ պարտականութիւն է աղօթել առ Աստուած վասն բարօրութեան աղգի»:

(Շարունակելի)

լալեանցին նշանակեց քննիչ Աստորախանի վի- ճակի: Քննիչի Աստորախան մտնելիս Սերովբէ աճեց տոկոսներով ու հասաւ վաթսուն հա- եպիսկոպոսը վախճանած է լինում: Սարգիս զար բուրբու: Քէրդ կաթողիկոսը ստացաւ այդ վարդապետի իւր քննութիւնը շարունակում է. գումարն եւ բերեց էջմիածին:

Ներսէս կաթողիկոսը ամենեւին յետ չէր մնում ժամերգութիւնից. առաւօտ եւ երեկոյ աշ- խատում էր ամենից առաջ գնալ եկեղեցի:

Մի առաւօտ իւր սովորութեամբ գնում է եկե- ղեցի եւ տեսնում է, որ բոլոր դասերը դա- տարկ են. ժամերգութիւնից յետոյ լուսարարին հրամայել է ցուցադրել եկեղեցի շէկողներին ա- նուններն. եւ հրամայում է, որ բոլորն էլ գնան լճի վերայ ամբողջ օրը կանգնին ու նա- յին աշխատող մշակներին. իրաւունք չունե- նալով ճաշի գնալու. թէեւ անտեսը նորանց համար ուղարկել էր ուտելիք: Կէս օրից յե- տոյ ինչն էլ գնաց լճի վերայ եւ սկսեց նա- խատել ժամ չեկողներին, այս խօսքերով. «Անշնորհներ, տեսէք — այս մշակներն եւ վարդապետներն արեան քրտինքով հաց են աշ- խատում. նորանք մեզ նման ամեն ինչ պատ- րաստ չունեն վայելու. այլ աշխատութեամբ հաց են ճարում — դուք էք նորանց դառն քըր- տինքով աշխատանք էք վայելում. անաշխատ եւ ծուլանում էք աստուծուն փառաբանել, մինչ- դեռ ձեր ալ պարտականութիւն է աղօթել առ Աստուած վասն բարօրութեան աղգի»:

(Շարունակելի)

